ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2023 թվականի N 1211-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի արձանագրությունն այն մասին, որ ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/11 ծածկագրով գնման ընթացակարգի՝ Հակադարձ աճուրդի ավարտից հետո ընտրված մասնակից ճանաչված ԴՈՆԵՌ ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու մասին, սակայն սահմանված ժամկետում ԴՈՆԵՌ ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել շտկված փաստաթուղթը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/11 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից ԴՈՆԵՌ ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01052798, գործունեության հասցեն՝ ք.Երևան Գայի 51/5) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշումը ներկայացնել լիազորված մարմին և մասնակցին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 09
ք. Արմավիր